

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՏՏՈՒՄԱՅԻՆՈՒՆՆԵՐ

(Ըստ Չարսաղի)

III.

Գործնական բնույցման անհրաժեշտության
հոգեբանական եւ մանկավարժական հիմնաւորումը.

Ա.

Հոգեբանական հիմնաւորումը.

Վերևում տեսանք, որ ներկայ դպրոցը — մասնաւորապէս
տարրական դպրոցը, որ կոչուած է բնականութիւն կրթութիւն մա-
տակարարելու — արդէն ձերայել, այնոր է ե այլ եւ անկարող է
իր սրբազան առարելութիւնը կատարելու: Տեսանք նախապէս, որ
միմիայն հիմնական բարեփոխութեան կենդանի շունչը կարող է
փրկել նրան այդ դրութիւնից. նրա սմբած երակներէ մէջ երթ-
տասարդական թարմ արիւն ներածելով:

Դա նշանակում է, որ ներկայ դպրոցը անպայմանօրէն պիտի
փոխի իր միակողմանի եւ դուռ տեսական բնութարարութիւնը, կամ
այլ խօսքով՝ դպրոցական ուսուցումը տեսականից պիտի վերա-
ձուի գործնականի, եթէ ի հարկէ նա՛ դպրոցը՝ կամենում է ապ-
րել եւ մարդկային քաղաքակրթութեան համար մի պիտանի գոր-
ծան լինել: Հակառակ դէպքում, նա կ'անդիտանայ մի հսկայական
խոչընդոտ, ընկած յառաջադիմութեան գծուարին անապարհի
վրայ եւ փոխանակ պիտի ու արդիւնաւէտ ծառայութեան, միայն
փրաւ կարող է հասցնել իր դճները բաղխող մանուկներին:

Այդ խիստ կարեւոր պահանջը «Դպրոցական Ընկերակցութեան»
ուխտեալ մարդարէնների գեղեցիկ ցանկութիւնը չէ, միայն — ան-
մարմին, վերացական եւ կեանքի պայմանների հետ ոչ մի անու-
շտութիւն չունեցող ցանկութիւնը: Ոչ, նա ամենից առաջ ծնունդ

*) Տես «Արարատ» Ապրիլ-Մայիս 1915 թ.

է իրական կեանքի և երկրորդ՝ բազմաթիւ բանաւոր ու գործնական հիմունքներից զատ, ունի նաև դուա գիտական հիմունքներ, որ տալիս է մեզ ուղեղի բնախօսական զարգացման ուսումնասիրութիւնը:

Տեսնենք նախ առաջինը, այն է՝ այդ պահանջի կեանքի ծնունդ լինելը:

Բնութեան անշեղելի օրէնքներից մէկն ասում է.— Ինչպէս որ ամեն մի բարդ օրգանիզմի ամբողջութեան շահն ու կենսունակութիւնը կախուած է նրա բաղկացուցիչ մասերի համաշարժ ու ներդաշնակ զարգացումից, այնպէս էլ այդ մասերից իւրաքանչիւրի զարգացումը կախուած է նրա՝ օրգանիզմի ամբողջութեանը ներդաշնակօրէն զարգանալու ընդունակութիւնից:

Այս ընդհանուր օրէնքից բացառութիւն չի կազմում և գլոպրոցը:

Դպրոցը հասարակական կեանքի բարդ մարմնակազմի կարևորագոյն գործարաններից մէկը լինելով, պիտի կարողանայ ընթանալ այդ կեանքին զուգընթաց: Հակառակ դէպքում նրա մահն անխուսափելի է:

Բայց ինչ ենք տեսնում:

Մինչ դեռ նախկին կեանքը—որի ուժալ կարիքներին ենք մենք պարտական ներկայ դպրոցի ծագումն ու գոյութիւնը— իր ամբողջութեամբ անհանաչելիութեան շարժ փոխուել, յեղաշրջուել է, դպրոցը մնացել է իր էութեամբ նոյնը, ինչ որ էր—կարելի է ասել— իր մանկութեան առաջին օրերում: Նա տակաւին մնացել է հաւատարիմ այն աւանդութիւններին ու օրէնքներին, որոնք նրան ծնող ժամանակամիջոցի տուեալները լինելով, վաղուց արդէն դադարել են գոյութիւն ունենալուց: Կեանքը հակառակական քայլերով առաջ է գնացել, իսկ դպրոցը մնացել է յետ, անկարող իր թոյլ ոյժերով նրան հետևելու:

Ներկայ հասարակակազմի խարխիւն է կազմում աշխատանքը, ֆիզիքական աշխատանքը, որ իր նախկին անփաստունակ վիճակից բարձրանալով, դարձել է քաղաքակրթութեան գլխաւոր հիմքը և մարդկութեան ամենախոշոր մասի գոյութեան կարևոր պայմանը: Այն ինչ դպրոցը, շանսալով կեանքի ձայնին և վտարելով աշխատանքը, շարունակում է պահպանել իր նախկին միակողմանի և դուա տեսական բնաւորութիւնը:

Եթէ նա կամենում է ապրել և մարդկութեան յատկապէս մութեանը ծառայել, եթէ նրա համար թանկ է իր կոչումը, նա պիտի փոխի իր բնաւորութիւնը և իր կրթական բովանդակ շէնքի հիմքը աշխատանքի վրայ գնի:

Այս մէկը Միւս հանդամանքը, որ պահանջում է դպրոցից

գործնական ուսուցումն — ինչպէս վերևում արդէն յիշեցինք — ուղեղի
բնախօսական զարգացման ուսումնասիրութիւնն է:

Ազգացուցումն փաստ է, որ մտածողութեան և ուղեղի գոր-
ծունէութեան կարողութիւնը կախում է ուղեղային զարգաց-
ման և գործելու բնութենակ վանդակների քանակութիւնից: Որքան շատ
են սրանք ու հասունացած, այնքան էլ գորեղ է ուղեղի ու մտա-
ծողութեան գործունէութիւնը, և ընդհակառակը:

Իսկ որովհետև վանդակների զարգացումը նախ և առաջ՝
կատարում է մանկական տարիներում և ապա՝ պայմանաւորում
է մանուկի զգայարանների ու մկանների գործունէութեամբ, ուստի
և ժխտել այդ գործունէութեան նշանակութիւնը մանուկի ուղեղի
զարգացման տեսակէտից — անկարելի է: Ուրիշ խօսքով՝ մանուկի
ուղեղի և մտածողութեան զարգացումը անմիջական հետեանքն է
նրա զգայարանների ու մկանների զարգացման: Չեն կարող զար-
գացած լինել մէկի միտքն ու մտածողութիւնը, եթէ թոյլ, ան-
զարգացած են նրա մկաններն ու զգայարանները:

Ինչպէս տեսնում ենք, գլխաւոր դերն այստեղ պատկանում
է — այնպէս կոչուած — մկանային զգայութեանը, այսինքն՝ մեր
մարմնի այն սասնանայատկութեանը, որի շնորհիւ նա կարողա-
նում է ուղեղին հաղորդել Եւրմիչ գրգիռներ (ДВИГАТЕЛЬНЫЕ СИГ-
НАЛЫ): Իսկ այդ գրգիռներն առաջացնող աղբիւրներն են՝ խա-
ղերը, մարմնամարդութիւնը և բոլոր ձեւարուեստները: Սրանք են
նաև աղբիւրը մեր բոլոր մտապատկերների ու ըմբանդութիւն-
ների, սրննցից և կախում են մեր զգացողութիւններն ու զան-
կութիւնները:

Այստեղից արդէն պարզ է, թէ որքան մեծ նշանակութիւն
ունի մկանների ու զգայարանների զարգացումը մտքի և մտա-
ծողութեան զարգացման խնդրում: Հէնց թէկուզ այն մի հատիկ
փաստը, որ ձեռքի ու մատների շարժումները զեկաժարող ուղե-
ղային վանդակիկների քանակը համեմատաբար շատ աւելի մեծ է,
քան մեր մարմնի մնացած միւս մասերը — բացառութեամբ գէմքի
ու ոտների — զեկաժարող վանդակիկները, կրկնում ենք — հէնց այդ
ու հատիկ փաստը բաւական է մեզ համոզելու, որ ձեռքի գործու-
նէութիւնը ուղեղի զարգացման անհրաժեշտ պայմանն է:

Առաջինք, որ մարմնամարդութիւնը, խաղերը և բոլոր ձեռ-
արուեստները մարդու ֆիզիքականին առած օգուաներից պատ-
նապատում են նաև նրա մտքի ու մտածողութեան զարգացմանը:
Դա ճիշտ է: Սակայն ճիշտ է և այն, որ մտածողութեան զարգաց-
ման տեսակէտից ահադին նշանակու-
թիւն ունի և գործող մկան-
ների քանակութիւնը: Որքան մեծ է նման որ և է գրադմունքի
մամանակ գործող մկանների թիւը, այնքան էլ մեծ է այդպիսի

զրազմունքի ազդեցութիւնը մտքի զարգացման վրայ:

Յայտնի է, մարմնամարզութեան և սովորական կուպիտ ձեռարուեստների ժամանակ մասններն ու նրանց բազմաթիւ մկանները շատ քիչ են զործում, իսկ քնքոյշ և նուրբ աշխատանքի ժամանակ— ընդհակառակը: Հետևաբար, գպրոցական ուսուցման համար ձեռարուեստներ ընտրելիս, պիտի անպայման դերադասութիւն տայ նուրբ աշխատանքներին, որովհետև շափազանց մեծ է և բարերար սրանց արած ներզործութիւնը ազդեցային շարժիչ նեարդերի վրայ:

Բայց չպէտք է մոռանալ մի կարևոր հանգամանք ևս.— մեծ մկանային խմբեր ղեկավարելն աւելի դիւրին է, քան փոքր մկանայինները: Մարմնամարզութեան և ձեռքի կուպիտ աշխատանքների ժամանակ զործում են շատ աւելի մեծ մկանային խմբեր, քան քնքոյշ և նուրբ աշխատանքների ժամանակ: Իսկ մտքի և մտածողութեան զարգացման տեսակէտից աւելի օգտակարը փոքր մկանային խմբերի գծուարին ղեկավարութիւնն է: Սրանից էլ հետևում է, որ ոչ մարմնամարզութիւնը, ոչ խաղերը և ոչ էլ կուպիտ ձեռարուեստները մտքի զարգացման համար չեն կարող խաղաղ այն դերը, ինչ կարող են նուրբ ձեռարուեստները:

Ազրակացութիւնը պարզ է:

Եթէ ձեռարուեստները— մանաւանդ նուրբ, քնքոյշ ձեռարուեստները— իրենց առած Գիգիֆական օգտի հետ միասին, զարգացնում են նաև միտքն ու մտածողութիւնը, եթէ նրանք նպատակաշարժար և ամենատուղիղ ճանապարհն են մտքի զարգացման, ապա ուրեմն անհրաժեշտ է, որ նրանք մուտք գործեն դրոցները և իրենց արժանի տեղը գրաւեն այնտեղ:

Իրանով ամենից առաջ կփրկուեն և իրենք գպրոցները, որ այսօր անկման վտանգի հանդէպ են կանգնած— կեանքից կտրուած, կեանքից շափազանց յետ մնացած լինելու պատճառով:

Բայց այստեղ անհրաժեշտ է մի կարևոր դիտողութիւն: Մանկավարժական յայտնի օրէնքը՝ «Հեշտից դէպի դժուարը» ձեռարուեստների ուսուցման ինդրում պէտք է արտայայտուի այսպէս՝ «Կուպիտից դէպի նուրբը»: Պէտք է սկսել մեծ մկանային խմբերի մասնակցութիւնը պահանջող ձեռարուեստներից և կամաց-կամաց անցնել դէպի փոքրեր պահանջողները, որովհետև առաջինների ղեկավարութիւնն անհամեմատ աւելի դիւրին է, քան երկրորդների՝: Ըստ այսմ, բնի, ստաների ու ձեռների պարզ վարժութիւնները, բնականաբար, պէտք է ծառայեն որպէս հիմք և նախապատրաստութիւն ձեռքի ու մասնների աւելի բարդ և նուրբ աշխատանքների համար:

Այս միջոցի գործադրութիւնը շափազանց կարևոր է մաս-

Նաւորապէս սօժանդակք կոչուած դպրոցների համար, որոնք հիմնուած են յետամնաց և անբաւարար շափով դարգացած երեխաների համար, որովհետև այդ երեխաները պահանջուած են ուսուցման և դաստիարակութեան բոլորովին այլ եղանակներ:

Ուղեգային երկու կիսագն-երի գու գացումը աջ եւ ձախ ձեռքի վարժուքիւնների միջոցով:

Մեզանում, սովորաբար, մարդու և վարժեցնում են միմիայն աջ ձեռքը. բայց դա թիւր հասկացողութեան արդիւնք է: Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել երկու ձեռների էլ—բաւ կարելւոյն—հաւասարաշափ վարժութեան վրայ, որովհետև երկուսի դարգացման հետ էլ սերտ առնչութիւն ունի ուղեղի դարգացումը:

Աջ ձեռքի գործունէութեան և ուղեղային ձախ կիսագնաթի դարգացման միջև եղած կապը բնախօսութեան մէջ անհերքելիօրէն ապացուցուած է: Այդ հանգամանքը մեզ իրաւունք է տալիս մանկավարժութեան մէջ հետեւեալ հարցը դնելու.—Եթէ աջ ձեռքի դարգացումից կախուած է ուղեղային ձախ կիսագնաթի դարգացումը, արդեօք չի կարելի ձախ ձեռքը վարժեցնելով, նպաստել ուղեղի աջ կիսագնաթի դարգացումը և ուժեղացնել նրա գործունակութիւնը:

Իրանով թերևս կարելի լինի նաև բացատրել աշակերտական մտաւոր յոգնածութիւնների այն բազմաթիւ և բազմապիսի երևոյթները, որոնք այսօր սովորական են մեր դպրոցական կեանքում:

Ինչպէս յայտնի է, ներկայ ուսուցումը—որի նպատակակէտն է, կարելի է ասել, գրել-կարդալու և համբանքի մեքենայական վարժութիւնը—ամբողջովին ծանրացած է ուղեղի միայն ձախ կիսագնաթի վրայ, որովհետև նա մարդու և աշխատեցնում է աշակերտի միայն լեզուական կարողութիւնները, իսկ խօսքի կամ լեզուական կենտրոնը գտնուած է և ուղեղային ձախ կիսագրնատում: Եթէ ուրեմն, աշակերտական մտաւոր յոգնածութեան դէպքերի ամենազգիտաւոր մասն առաջանում է ուղեղային ձախ կիսագնաթի լարուած ու շափազանց աշխատութիւնից, նշանակում է, որ նրանց մի խոշոր բաժինը բնաւ տեղի չէր ունենայ, եթէ այդ աշխատանքի մի մասը իր վրայ վերցնէր ուղեղի աջ կիսագնաթը:

Ստույգ է, որ գործնական մանկավարժութիւնը գեո ևս չի չուծել այն հարցը, թէ կան արդեօք և որոնք են ուսուցման այն առարկաները, որ բնդունակ են առաջն առնելու աշակերտական մտաւոր յոգնածութեան դէպքերի—ուղեղի երկու կիսագնաթերն ևս

ձեռարուեստների նման հաւասարաչափ աշխատեցնելով: Բայց բժշկա-դաստիարակչական հիմնարկութիւնների մէջ կատարուած փորձերն արդէն անհերքելիօրէն ապացուցել են այդ կարևոր խնդրով լրջմտութեամբ պրագուելու անհրաժեշտութիւնը: Նրանք ապացուցել են, որ այս կամ այն ձևերի վարժութիւնների միջոցով հնարար է ոչ միայն բժշկել լեզուական որոշ թերութիւններ, այլ և— մի քանի դէպքերում— սակզծել լեզուական (խօսքի) նոր կենտրոն ուղեղի աջ կիսագնում:

Չեմքի եւ մեքի աշխատանքների օխոյ ամբերումը:

Ընդունուած է՝ մարդկային աշխատանքը բաժանել երկու տեսակի— մտաւոր և ֆիզիքական: Սակայն ամենայն վստահութեամբ կարելի է պնդել, որ այդ բաժանումը սխալ է և ընտ հիմք չունի, որովհետեւ— ինչպէս արդէն տեսանք— բոլոր նուրբ ձեռարուեստներն էլ նպատարւում են ուղեղի զարգացմանը: Ուրիշ խօսքով, մտքի զարգացման տեսակէտից ձեռքն ևս մի նայնալիսի զգայարան է, ինչպէս են տեսանելիքը կամ լսելիքը:

Այստեղից արամարանօրէն հետեւում է, որ ձեռքն ևս մարդկային մտաւոր դաստիարակութեան ամենակարևոր գործօններից մէկն է, որովհետեւ նրա նկատմամբ և զարգացման կենտրոնը գտնուում է գլխի ուղեղում:

Թէև այս փաստի գոյութիւնը— կարելի է ասել— արդէն ապացուցուած է և ընդունուած են ամենուրեք, բայց և այնպէս նրա գործնական հետեւանքներից— որոնք այնչափ կարևոր են մեր դաստիարակչական ամբողջ սխալների համար— սակայն ոչ մի տեղ հարկաւոր չափով ցայսօր չեն օգտուել և չեն օգտուում: Նայն իսկ յետամնաց երեխաների համար հիմնուած դպրոցները յանցաւոր են այս խնդրում:

Ճիշտ է, ձեռարուեստները և նրանց ուսուցումն այստեղ շատ ասելի անաջ են գնացած և ասելի պատուաւոր տեղ են բռնում, քան միւս դպրոցներում, սակայն այդ տեղի ունի ոչ ձեռարուեստների՝ մտքի զարգացման տեսակէտից՝ ունեցած ահագին նշանակութեան յատուկ գիտակցութեամբ: Ասելի շուտ այստեղ դեր են խաղում զմնազան արտաքին հանգամանքներ, ինչպէս է— օրինակ— որ ձեռքի աշխատանքը կարևոր և անհրաժեշտ է յետամնաց երեխաների ապագայի համար:

Յ. Տէր Բաղդեան:

(Շարունակելի)